ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայոց կենտրոնական Ազգային խորհրդի նիստերի արձանագրություններում[1] ուշագրավ են մայիսի 28 և 30 ամսաթվերը, որոնք, որպես Հայաստանի Հանրապետության ստեղծման օր, լուսաբանել է իրադարձությունների անմիջական մասնակից Ս. Վրացյանը: Նա ամսի 28-ը կարևորել է որպես օր, երբ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը՝ ինքնիշխան պետության լիազորների կարգավիճակով, մեկնել էին Բաթում՝ օսմանյան վերջնագրով թելադրված հաշտություն կնքելու հրահանգով: Միաժամանակ Ս. Վրացյանը նշում է մայիսի 30-ը՝ որպես այդ բանակցությունների պաշտոնական սկիզբ և ՀԱԽ-ում «Կոչ հայ ժողովրդին» փաստաթղթի ընդունման օր: □Անկախության հայտարարությունը,– վկայում է նա,– եղավ ավելի ուշ, մայիսի 30-ին, ավելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգ[ային] խորհրդի հոժար կամքով□[2]: Ըստ Ս. Վրացյանի՝ այդ գրությունը «իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին»[3]: Ս. Վրացյանի հուշերում բացակայում է նաև հայերին ուղղված՝ հայրենիքը չլքելու մասին ՀԱԽ-ի նախագահության հորդորի դրվագը: ՀԱԽ-ի անդամ Ա. Բաբալյանի գրքում ևս առկա է նմանատիպ մոտեցում[4]:

Դեպքերի մասնակից Ա. Խատիսյանը «բանաձևի» ընդունումը վերագրում է ՀԱԽ-ի մայիսի 28-ի կեսօրին գումարված նիստին, թեև դա չի համընկնում

---

[1] *Արևելահայ կամ Հայոց կենտրոնական Ազգային խորհուրդը (այսուհետև՝ ՀԱԽ) կազմավորվել է 1917 թ. հոկտեմբերի 13-ին Թիֆլիսում՝ Ռուսահայոց համագումարի (այն է՝ Հայ միջկուսակցական խորհրդակցության) կողմից: Այն բաղկացած էր 15 հոգուց և գործել է հոկտեմբերի 16-ից (հին տոմարով) մինչև 1918 թ. հուլիսի 15-ը: Այնուհետև մարմինը տեղափոխվել է Երևան ու դարձել Հայաստանի Հանրապետության Խորհրդարան: ՀԱԽ-ի արձանագրությունների մեքենագիր և ձեռագիր տարբերակները պահվում են Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ): Սույն հրապարակման համար հիմք է ծառայել մեքենագիր օրինակը: Երրորդ փաստաթուղթը համեմատվել է ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 9–10-ում ձեռքով կատարված գրառումների հետ: Դրանից վերցրած լրացումները դրել ենք քառակուսի փակագծերի մեջ:*

[2] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 160:*

[3] *Նույն տեղում, էջ 161:*

[4] *Ա. Բ ա բ ա լ յ ա ն. Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Կահիրե, 1959, էջ 6–7:*

բուն արձանագրությունների բովանդակությանը[5]: Լայն տարածում ստացած նույն ամսաթիվն են հիշատակում Ռ. Տեր-Մինասյանը և Ա. Ահարոնյանը: Վերջինս նույնիսկ անկախության հռչակումը համարել է «տանուլ տված ժամանակ լավ տեսք պահպանելու» ձև[6]:

Հատկանշական է, որ 1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում Հայաստանի Հանրապետության խորհրդարանի բացման ժամանակ նրա նախագահ Ա. Սահակյանն իր հանդիսավոր ճառում ընդհանրապես չի նշել անկախության հռչակման որևէ ամսաթիվ: Նրա խոսքով՝ ՀԱԽ-ը սեղմեց իր սիրտը, ընդունեց թուրքական վերջնագիրն ու ճանաչեց Հայաստանի անկախությունը: Ա. Բաբայանը իր վերոհիշյալ գրքում մեջբերել է ՀՀ դիվանագետների հետ հանդիպման ժամանակ Մեծ եղեռնը ներշնչող Բ. Շաքիրի խոստովանությունը, թե օսմանյան իշխանությունն անկարող եղավ ոչնչացնել բոլոր հայերին տեղահանություններով և կոտորածներով, ուստի ստիպված է ճանաչել ներկա Հայաստանի անկախությունը[7]:

Պատմագիտության մեջ վերոնշյալ իրադարձությունները մանրամասն ու բովանդակալից նկարագրվել են Ռ. Հովհաննիսյանի □Հայաստանը անկախության ճանապարհին□ գրքում: Մայիսի 28-ը նա նկարագրում է որպես օր, որը հատկանշվում է 1919 թ. տոնակատարությամբ ու Կոչը ճշտորեն թվագրում է մայիսի 30-ով: Առաջին ամսաթիվը բնութագրում է որպես պահ, երբ ՀԱԽ-ը ժամը 12:00-ին իր պատգամավորներին ընդամենը լիազորել է անկախ «Հայկական Հանրապետության» անունից ստորագրել Բաթումի պայմանագիրը[8]: Ընդ որում, Ռ. Հովհաննիսյանի հիմնավորումը չունի արխիվային հղում. մայիսի 28-ի արձանագրություններում բացակայում է վերոնշյալ □բանաձևը□, ավելին՝ երեկոյան նիստի մասնակիցները կրկին հետաձգել էին խնդրի լուծումը: Պատմաբանը նկատում է, թե հայերը Բաթումում թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլ բեյ Մենթեշեին մայիսի 30-ին են հաղորդել ՀԱԽ-ի գլխավոր որոշման մասին, ու հենց այդ օրն էլ Բաթումում սկսվել էին հայ-թուրքական պաշտոնական բանակցությունները[9]: Մայիսի 28-ի և 30-

---

[5] *Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 84–85 (այսուհետև՝ Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը), Մայիսի 28, Փարիզ, 1926, էջ 39:*

[6] *Մայիսի 28, էջ 28, 33:*

[7] *Ա. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 14–15, 19, Հայաստանի Հանրապետության Պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., գլխ. խմբ. և կազմ. Ա. Վիրաբյան, Երևան, 2010, էջ 7–8, 10:*

[8] R. H o v a n n i s i a n. Armenia on the Road to Independence. 1918 *(այսուհետև՝* On the Road), Berkeley and Los Angeles, 1967, pp. 191, 305. *Պատվիրակները, ինչպես և մայիսի 30-ը հիշատակվում են էջ 191-ում: Նույն մոտեցումը տե՛ս նաև* R. H o v a n n i s i a n. The Republic of Armenia, in 4 vols., vol. I The First Year, 1918–1919, Berkeley and Los Angeles, 1971, p. 33; *Ռ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Առաջին տարին, 1918–1919, Երևան, 2005, էջ 34:*

[9] On the Road, pp. 194–195.

ի մասին նույն մեկնաբանությունն առկա է նաև Ռ. Փիրումյանի[10] ու Ա. Տեր-Մինասյանի գրքերում: Վերջինս շեշտադրում է ինքնիշխանության պատմական կապը Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում մղված հերոսամարտերի հետ[11]:

Մեր կարծիքով՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման առումով ավելի իմաստալից է ամսի 30-ը: Այսպես. Ավարայրի ճակատամարտի օրը՝ մայիսի 26-ին, Սարդարապատում ընթացել են ամենածանր, սակայն հաղթական մարտերը: Մայիսի 28-ը՝ Բաթում գնացած պատվիրակությունից բացի, հայերիս համար հատկանշական է Ղարաքիլիսայում կրած դառը պարտությամբ, քաղաքի ու մոտակա գյուղերի ազգաբնակչության կոտորածով: Մայիսի 29-ին հաղթանակով են պսակվել Սարդարապատի ու Բաշ Ապարանի մարտերը: Սարդարապատի մատույցներում էր փրկվել Երևանը, և թուրքական ուժերը փախել են հայկական կանոնավոր բանակից: Մայիսի 30-ն էլ օժտված է քաղաքական առումով զուսպ, բայց պաշտոնական Կոչով հայ ժողովրդին, ուր հայտարարվում է ազգային պետության ստեղծում: Հիշենք նաև, որ Մահմեդական ազգային խորհուրդը, որը մայիսի 27-ին հռչակել էր «Արևելյան ու հարավային Անդրկովկասի» անկախությունը, մայիսի 28-ին այն վերանվանել է Ադրբեջանի Հանրապետություն[12]:

Նկատենք նաև, որ Բրեստ-Լիտովսկի հաշտությունն ու 1918 թ. մարտի 12-ին Էրզրումի կորուստը երկընտրանքի առաջ են կանգնեցրել ՀԱԽ-ի անդամներին՝ ճանաչել այդ պայմանագիրն ու իրենց հայտարարել Խորհրդային Ռուսաստանի մաս կամ անջատվել, պատերազմել Թուրքիայի դեմ ու միայնակ պաշտպանել Հայաստանը: Բաքվի հայտնի իրադարձությունները ցույց տվեցին, որ բոլշևիկյան իշխանությունը խրված էր քաղաքացիական կռիվներում և ի վիճակի չէր մեզ օգնել: Ապրիլի 25-ից Կարսի անկումն ու թուրքական բանակի ներխուժումը Երևանի նահանգ վկայեց Ռուսաստանի հանդեպ օսմանյան կողմի ստանձնած պարտականություններն անտեսելու մասին: Բաթումի կոնֆերանսի ընթացքում՝ մայիսի 15-ին, Ալեքսանդրապոլը գրավելուց հետո Թուրքիան չէր թաքցնում Բաքուն գրավելու իր մտադրությունը[13]: Մայիսի 26-ին Բաթումում թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլի հնչեցրած վերջնագիրն էլ բացեիբաց ազդարարել էր, որ Հայաստանի անկախությունը Բրեստ-Լիտովսկի հաշտությունից ավելի վնասաբեր է լինելու: Այդ կորուստներին այժմ ավելանում էին Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Էջմիած-

---

[10] *Ռ. Փիրումյան. Հայաստանը Հ. Յ. Դ. – բոլշևիկ հարաբերությունների ոլորտում, Երևան, 1997, էջ 93–94:*

[11] A. Ter Minassian. 1918–1920 La République d'Arménie, Bruxelles, 2006, p. 71, 78.

[12] On the Road, p. 189, 304; *ï»°ë* M. E. Rassoul-Zadé. L'Azerbaidjan en lutte pour l'Indépendance. Paris, 1930, p. 18.

[13] *Տե՛ս, օրինակ, Ստ. Շահումյանի մայիսի 24-ի հեռագիրը Կրեմլ (*С. Г. Шаумян. Избранные произведения, т. 2. М., 1958, с. 246*), ամսի 27-ի ու 30-ի հեռագրերը Լենինին (էջ 239, 256, 259, 275):*

նի գավառների հողերը[14]: Հետևաբար, ՀԱԽ-ում ոչ մի երաշխիք չունեին, որ Բաթումում կնքվելիք հաշտությունը □հարգվելու□ է թուրքերի կողմից:

Ինքնիրավ պետական իշխանություն ստեղծելու ժամանակ ՀԱԽ-ը հարկադրված էր կշռադատել Ռուսաստանի միապետական ու հեղափոխական ժողովրդական հոսանքների, բոլշևիկների ներքին ու արևելյան քաղաքականությունը, Բրեստի հաշտության հետևանքները և Անդրկովկասի այլ երկու հանրապետությունների կուրսը: Չմոռանանք ավերված հայկական տնտեսության, պետական աշխատակազմի բացակայության, 1915–1917 թթ. Եղեռնից մազապուրծ զանգվածային գաղթականության մասին, ինչին գումարվում էր հաղորդակցության, փոխադրամիջոցների աղետալի վիճակը[15]:

Հարց է ծագում. 1918 թ. մայիսի 30-ի «Կոչ հայ ժողովրդին» փաստաթուղթը արդյոք փոխարինե՞լ էր Հայաստանի անկախության հռչակագրին: Ոչ: Հունիսի 8-ին ՀԱԽ-ը չի հաստատել նոր հրովարտակի նախագիծն ու այն ուղարկել է վերամշակման[16]: Հունիսի 12-ին Խորհրդում վերստին քննարկվել է Հայաստանի Հանրապետության անկախության մասին հայտարարության–հրովարտակի[17] հարցն ու Կ. Պոլիս մեկնելու և այնտեղ Քառյակ դաշինքի հետ հաշտություն կնքելու մեծ վեզիրի հրավերը[18]: Հայկական առաքելությունը ժամանել է Բոսֆորի ափ, ուր 1918 թ. հունիսի 19-ից[19] նոյեմբերի 1-ը նվաստացուցիչ բազմաթիվ հանդիպումներ է ունեցել օսմանյան տիրակալների հետ: Այնուհանդերձ, մի ամսվա ընթացքում վավերացման ենթակա Բաթումի պայմանագիրը չի հաստատվել Հայոց Ազգային խորհրդում, հրովարտակն այդպես էլ չի հռչակվել, Կ. Պոլսում ծրագրված միջազգային կոնֆերանսն էլ չի գումարվել:

Անկախության մասին հրովարտակի կազմելն ու հռչակելը, ըստ երևույթին, տեխնիկական առումով դժվար չէր իրականացնել: Խոչընդոտ էին Հայաստանի ոչ լիարժեք անկախությունը և այն աղետալի իրավիճակը, որում գործում էր ազգային պետությունը: Արձանագրություններում նկատելի է Ազգային խորհրդում վստահության պակասը՝ կապված Սարդարապատի հաղ-

---

[14] *Տե՛ս* Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, с. 269–270, 271, 309–310.

[15] *Այդ մասին մանրամասն տե՛ս* С. Г. Шаумян. *Նշվ. աշխ., էջ 247, 264, 266:*

[16] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 251:*

[17] *Նույն տեղում, թ. 251, 252 դարձ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 88, 93–94:*

[18] *Քառյակը հիմք էր ընդունում Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանները, քանի որ Բաթումում թելադրված պահանջներն ակներև հակասում էին Ռուսաստանի հանդեպ Գերմանիայի հանձն առած պարտավորություններին: Մեծ վեզիրի հրավերին և Կ. Պոլսում անցկացված բանակցություններին տված մեր դիտարկումը համընկնում է Հովհ. Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» 10-րդ հատորում (գլխ. խմբ. Է. Ջրբաշյան, Երևան, 1999, էջ 643–644) զետեղված խմբագրական մեկնաբանության հետ:*

[19] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 2:*

թանակի հետ, դրա նշանակությունը պետություն կերտելու գործում, որը վերահաս հայ-թուրքական բանակցությունների համար ընկալվում էր ոչ լիովին: Այնինչ, վճռորոշ Կոչն ընդունվել է մարտական այս հաջողության հաջորդ օրը, որը վկայում է անխզելի կապը պաշտպանվելու ունակության և անկախության միջև:

ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

№ 1

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, մայիսի 28, 1918 թ., 12:00–15:30, նիստ ՃԺԴ (114)

Նախագահում է՝ Ա. Ահարոնյան, ներկա էին՝ Ս. Մամիկոնյան, Խ. Կարճիկյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Բաբալյան, Ն. Աղբալյան, Լ. Թումանյան, Ա. Ստամբոլցյան, Մ. Պապաջանյան, Ա. Երզնկյան, Ղ. Տեր-Ղազարյան, Տ. Բեկզադյան: [Ներկա էր նաև՝ Ս. Հարությունյան]:

Տաճկական ուլտիմատումի խնդիրը:

Նախագահի *առաջարկով ֆրակցիաներն անում են իրենց հայտարարությունները. Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի կողմից* Խ. Կարճիկյանը *հայտնում է. թուրքական ուլտիմատումը չպետք է ընդունվի հետևյալ պատճառաբանությամբ. նախ ձևական տեսակետից, որովհետև ուղղված է Անդրկովկասյան կառավարության և ոչ մեզ, երկրորդ. որ էականն է, մեր ստորագրությունը ոչնչով չի կանգնեցնի նրանց առաջխաղացումը և հայ զինվորների զինաթափման մտադրությունը, այդ է թելադրում մեզ տաճկական քաղաքականության ըմբռնումը և հակառակը պնդելու չկան երաշխիքներ ու տվյալներ: Ընդունել ուլտիմատումը կնշանակի առիթ տալ զինաթափման, որ սկիզբն է լինելու մեր ժողովրդի կոտորածի: Այսպիսով կկոտրենք նրա դիմադրական թափը: Ստորագրելով՝ մուսավաթից բան չենք ստանա, բայց կկորցնենք մեր ինքնապաշտպանական ուժը: Դիմադրությունը շարունակելով՝ մուսավաթին կստիպենք ավելի զիջող լինել հօգուտ հայ ժողովրդի: Ի նկատի ունենալով այն, որ վրացիներն էլ չեն ստորագրի և հավանորեն թուրքերը, որոնք շարունակ դեմ են արտահայտվել: Վերջապես ուլտիմատումն ընդունելով՝ դեռ չի նշանակում, թե կռիվը դադարում է, որովհետև շատ հայկական շրջաններ կարող են շարունակել կռիվը:*

Չստորագրելը ապագա կոնֆերանսում մեծ նշանակություն կունենա մեր իրավունքների պաշտպանության տեսակետից: Ահա այս բոլոր հանգամանքները ի նկատի ունենալով և օտարների միջամտության վրա առանձին հույս չունենալով և մնալով կատարյալ մենակ՝ Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան առաջարկում է չստորագրել թուրքական ուլտիմատումը:

Հայ Ժողովրդական կուսակցության կողմից Մ. Պապաջանյանը *հայտնում է. իրենց ֆրակցիան կողմնակից է ուլտիմատումն ընդունելու և ահա թե ինչու. սրանով մեր հարաբերությունները կլավանան, կմեղմանան մահմեդական տարրերի հետ, որ հիմա շատ լարված է: Մենք չենք կարող իհարկե երաշխա-*

վորել, թե թուրքերը առաջ չեն գա, բայց չստորագրելու դեպքում նրանք կգան իբրև հաղթողներ, և կստեղծվի գաղթականական մի նոր հոսանք, ավելի կործանարար, քան ուլտիմատումից բխող մյուս ծանր հետևանքները: Մեզ տված փոքրիկ հողաբաժինը հնարավորություն կստեղծի մեր ցանկացած կյանքը վարելու. անկախություն կամ կոնֆեդերացիա, նայած հանգամանքներին: Թե ինչ են անելու վրացիները, ինքը չգիտի, բայց ավելի հավատում է թուրքերին, որոնք հաշտության բանակցությունների ընթացքում ավելի լավ էին վերաբերվում մեզ: Մեզ իրավունք է տրվում 2 դիվիզիա ունենալու, որ, անշուշտ, շատ ավելի լավ կլինի, քան այժմյան անկարգ զորքերը: Հ. Քաջազնունին չի ուզում ստորագրել, վախենալով ապագա կոնֆերանսից, բայց դա էական նշանակություն չունի, որովհետև փաստական տիրապետությունը շատ ավելի արժեք չունի: Ունենալով մեր փոքրիկ հողաբաժինը՝ ապագայում ավելի հնարավորություն կունենանք մի բան ստանալու: Այս ձևով … կոնֆեդերացիայում մենք ավելի դեր կկատարենք, քան վրացիները: Կազմակերպված պետությամբ մենք կարող ենք մեր ժողովրդին ավելի օգնել: Դիմադրությունը տաճիկներին[20] ավելի կգրգռի, և մեր ժողովուրդը կամ պետք է գաղթեցնել, որ անհնար է և կամ բնաջնջել: Թեև նրանք ստորագրելուց հետո էլ կգան, բայց այն սարսափները չի լինի, ինչ որ կլինի կռվելու դեպքում: Մյուս վիճելի խնդիրները կարելի է Կ. Պոլսում լուծել, մանավանդ, որ տեղիս թուրքերը այդ բաները կպաշտպանեն:

Ս. Հարությունյանը *կարդում է Հ. Ժ. Կուսակցության ֆրակցիայի բանաձևը.*

Ի նկատի ունենալով՝

I. Որ տաճկական նվաճումից ազատ մնացած շրջանները Երևանի և Գանձակի նահանգում ներկայումս կտրված են դրսի աշխարհից՝ մի կողմից շրջապատված են տաճկական զորքերով, մյուս կողմից զինված թուրք[21] ազգաբնակությամբ, որը կտրել է ամեն մի հաղորդակցություն հիշյալ հայկական շրջանների հետ:

II. Որ հայկական զորքը, ինչպես պաշտոնապես տեղեկացնում է կորպուսի հրամանատար գեն. Թ. Նազարբեկյանը, մեծ մասամբ կազմալուծված է, ինչպես Ալեքսանդրապոլի զինվորներն ու սպաները:

III. Որ մնացած զորամասը Երևանի նահանգում դեռ շարունակում է կռվել թշնամու դեմ, բայց նա ևս անկարող է երկարատև դիմադրել և կռվել թշնամու դեմ իր սակավության և թե ռազմամթերքի ու պարենի խիստ պակասության պատճառով:

IV. Որ հայ ժողովրդի մեջ էլ նկատվում է լքում և կռվելու տրամադրության բացակայություն, իսկ եթե տրամադրություն լիներ, ժողովուրդը անկարող է կռվել հաջողությամբ տաճկական կանոնավոր զորքերի դեմ, մանավանդ որ ժողովուրդն էլ չունի ոչ ռազմամթերք և ոչ էլ պարեն:

V. Որ անհաջող կռիվները ավերիչ հետևանքներ ունեն հայ ժողովրդի համար, նա ոչ միայն քայքայվում է տնտեսապես, այլև ֆիզիկապես, առաջ եկած հայկական գաղթը սպառնում է ժողովրդին կորստաբեր հետևանքներ:

VI. Որ տաճկաց կառավարության առաջարկած ուլտիմատումը խաղա-

---

[20] *Թուրքերին:*

[21] *Ադրբեջանական:*

դություն կնքելու համար, թեև շատ ծանր է և գրավական չէ, թե անպայման կհաստատվի խաղաղություն, և պատերազմը իսպառ կվերջանա, բայց չընդունելու դեպքում հետևանքը պարզ է. զենքի ուժով նվաճումը մնացյալ հայկական շրջանների, որից հետո կվարվի հայ ժողովրդի հետ հաղթողի իրավունքով, իսկ ընդունելու դեպքում չի կորցնում այն հույսը, որ եթե մշտապես, գոնե ժամանակավորապես կդադարեն պատերազմական գործողությունները. հայ ժողովուրդը կմնա իր տեղում, գաղթը կընդհատվի, և մի որևէ ապրելու հնարավորություն կստեղծվի մինչև սպասելիք համաեվրոպական կոնգրեսը, երբ հայկական խնդիրը կստանա իր լուծումը:

VII. Որ ուլտիմատումի ընդունելը կարող է ապահովել, մեզ հնարավորություն տալ ունենալու մի փոքր ազգային տերիտորիա, որ կլինի ապագա ազգային կյանքի սաղմը, Հ. Ժողովրդական կուսակցության Կոմիտեն որոշեց ընդունել տաճկական ուլտիմատումը:

1. Բանակցել Բաթումի տաճկական խաղաղարար պատգամավորության հետ, որպեսզի էջմիածինը մնա այժմյան հայկական անվիճելի շրջանում, իսկ մնացյալ հայկական շրջանների մասին, որոնք ուլտիմատումի հիման վրա անցնում են Տաճկաստանին, համարվեն առժամանակ վիճելի և նրանց հետ ստանալու համար ուղարկեն Կ. Պոլիս պատգամավորություն:

2. Պահանջել, որ նոր գրավված հայկական շրջաններից մինչև նրանց վիճելի որոշվելը ընդհանուր խաղաղության կոնգրեսում, հայերը չենթարկվեն զինակոչի և պատերազմական պարտադիր աշխատանքների:

3. Որ նոր կազմվելիք Հայաստանում պետք է լինեն կազմակերպված զինվորական ուժեր. ներքին կարգի ու սահմանների պաշտպանության համար և

4. Հրահանգել, որ թույլ տրվի գաղթած հայերին վերադառնալ իրենց վայրերը:

Ղ. Տեր-Ղազարյան. *Սոցիալ-դեմոկրատների կողմից. Այդ ուլտիմատումն ուղղված է Անդրկովկասյան կառավարության, որ այժմ գոյություն չունի: Մի շաբաթ խնդրել, որպեսզի կարողանանք հայ ժողովրդի ուժերը հավաքել և որոշել մեր ապագա վիճակը: Իհարկե, մենք համոզված ենք, որ նրանք չեն տա, բայց այդ ժամանակաշրջանում մենք հնար կունենանք մեր ուժերը հավաքելու: Բայց այդ ուլտիմատումի մեջ կա մի կետ, որ ուզում է մեր մեջ ստեղծել քաղաքացիական կռիվ, պահանջելով կռիվ հեղափոխական բանդաների դեմ, իսկ այդ հանգամանքը ոչ պակաս նշանակություն ունի մեզ համար: Մեր կարծիքով՝ մենք հայ ժողովրդի կողմից մանդատ չունենք որևէ կառավարության հետ կռիվ կամ հաշտություն կնքելու, ուստի և պետք է հրաժարվել ստորագրելուց: Վերջապես ոչ մի հավատ չունենք այդ հաշտության ամրությանը, ուստի և պետք է վճռապես մերժել այդ ուլտիմատումը:*

Լ. Թումանյան. *Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության կողմից հայտնում է, որ իրենց ֆրակցիան ևս դեմ է ուլտիմատումը ստորագրելու համարյա նույն պատճառաբանություններով, որ այստեղ հիշվեց, ուստի ավելորդ է համարում երկրորդել:*

Ա. Ստամբոլցյան. *Տաճկական ուլտիմատումը ըմբռնելու համար պետք է հետևել նրա մեծ ուսուցիչ՝ Գերմանիայի քաղաքականությանը:*

Ինչ որ սա արեց Ռուսաստանի նկատմամբ, նույնն էլ անելու է Տաճկաստանը: Բրեստից հետո նա դարձյալ մտավ Ռուսաստանի սիրտը և գրավեց

նրա ամենաարդյունաբեր վայրերը, նույնը տեղի կունենա Կովկասում, և մենք ստորագրելուց հետո անգամ չպիտի ազատվենք տաճկական տիրապետությունից: Տիրապետություն, որ մահացու հարված է հասցնելու մեր ժողովրդին: Ուլտիմատումի բնական հետևանքը լինելու է մեր անկա-խությունը, որ ոչ միայն փաստապես, այլ իրավաբանորեն անջատելու է Ռուսաստանից: Իսկ այս դրությունը ծայրահեղ մեկուսացման է ենթարկելու հայ ժողովուրդը:

Ռուսաստանը, նույնիսկ բոլշևիկականը, իր այս դրությամբ շատ ավելի արժեք ունի միջազգային հարաբերությունների մեջ, քան որևէ կովկասյան իշխանություն: Ուլտիմատումն ընդունելը կնշանակի զրկվել նրա աջակցությունից և միջամտության հնարավորությունից: Այս պատճառներով ահա պետք է մերժել ուլտիմատումը:

Ա. Երզնկյան. *Ֆորմալ տեսակետի վրա կանգնելը անիմաստ բան է, որովհետև մեր զորքը դնում ենք [ապօրինի] դրության մեջ, պետք է նրան իրավաբանապես ապահովեցնել՝ հայտարարելով մեզ կառավարություն և մեր զորքն էլ՝ մերը:*

Ս. Մամիկոնյան. *Քանի որ ուլտիմատումն ուղղված է Անդրկովկասի կառավարության, իրավականորեն մենք ազատ ենք չպատասխանելու: Մեզ համար գոյություն չունի ուլտիմատում, այլ կա կռիվը: Իհարկե, այդ կռիվը հուսահատական է, բայց ինչ արած. փոքր ժողովուրդների բախտն այն է, որ նրանք հաճախ հուսահատական կռիվ են մղում: Եթե չկռվենք՝ քաղաքական մահ է սպասում, իսկ կռիվը որոշ տվյալներ է տալիս մեր ա-պագայի նկատմամբ: Կոտորելու դեմ ոչ այս և ոչ այն ձևով կարող ենք առնել: Մեր փոքրիկ հողաբաժինը, թեկուզ անկախությամբ, ոչինչ չի փրկի, այլ մեզ կտրելով ու մենակ թողնելով՝ կտիրի մեզ պատերազմի իրավունքով: Բայց եթե տաճիկները իսկապես ուզում են մեզ բան անել, թող մի ռեալ, շոշափելի բան տան, գրի խոստումները անել տաճիկների կողմից ոչինչ արժեք չունի: Ուրիշ ելք չկա, միայն կռիվ, որով կազնվացնենք մեր ցեղը: Ինձ թվում է, որ օգնություն Դրոյից հազիվ թե լինի, և մեր կռիվն էլ հաջողություն ունենա, բայց թող կռվով տիրեն: Ապագայում թող մեր դատը լուծվի, ինչպես խոստացել են դաշնակիցները:*

Տ. Բեկզադյան. *Ոչ մի ուլտիմատում չստորագրել: Այն տերիտորիան, որ մեզ են տալիս, հեգնանք է, որով ոչինչ չի կարելի անել: Նրա քաղաքական իդեալն է մեզ ոչնչացնել: Թեև փոքր ենք, բայց շուտ կանհանգստացնենք նրանց. թուրքերն այդ լավ գիտեն և պետք է իրագործեն իրենց բնաջնջման ծրագիրը: Ինքը օտարներից ոչ մի հույս չունի, դատապարտված ենք գուցե կոտորվելու, ուստի չպետք է ջլատել ժողովրդի ինքնա-պաշտպանությունը: Եթե մեր զորքը [վատթար] դրության մեջ է, մեղքը մերը չէ: Համաձայն եմ, որ ժամանակ խնդրենք մինչև նոր կառավարություն կազմվի: Թող տան ռեալ բան, որ նրանց հավատանք:*

Ն. Աղբալյան. *Քանի որ մեծամասնությունը ուլտիմատումը չընդունելու կողմնակից է, նոր մարդիկ ուղարկենք իմանալու համար, թե նոր պահանջներ անո՞ւմ են մեզ:*

Ս. Հարությունյան. *Զևական իրավական կողմից ճիշտ են նրանք, որոնք ասում են, թե մեզ չի ուղղված ուլտիմատումը, բայց դա էական նշանակություն չունի: Եթե ուլտիմատումը չենք ընդունում, ձևական առարկությունը երկրորդական բան է:*

Նախագահը *վիճաբանությունները վերջացած համարելով՝ քվեարկության է դնում ուլտիմատումի խնդիրը:*

Ձայների մեծամասնությամբ մերժ[վ]ում է ուլտիմատումը, հակառակ Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների՝ Մ. Պապաջանյանի և Ս. Հարությունյանի: Մերժման կողմնակիցն են սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ-հեղափոխական և դաշնակցական[22] ֆրակցիաները և Ս. Մամիկոնյան ու Տ. Բեկզադյան:

Քվեարկությունից հետո Հայ Ժողովրդական կուսակցության կողմից Մ. Պապաջանյանը *հայտնում է, որ համաձայն Կենտրոնական Կոմիտեի որոշման, իրենց ներկայացուցիչները Ազգային Խորհրդից հետ են կանչվում:*

Այս հայտարարության առթիվ նախագահը *ասում է, որ սրանով մեր դրությունը թուլանում է և պետք է մեր ապագա վիճակի մասին խոսել:*

Ա. Երզնկյան. *Այս դրությունը գտնում է բնական, որովհետև երբ մի կուսակցության գիծը չի անցնում, մնում է իբրև օպոզիցիա:*

Խոսակցությունն ընդհատվում է, և կարդացվում է Հ. Օհանջանյանի նամակը Օ. ֆոն Լոսովի[23] մասին: Նա առաջարկում է նախ ուլտիմատումն ընդունել այն դեպքում, երբ չորս պետությունները կստորագրեն, սահմանները չորոշել, անկախություն հայտարարել: Գերմանիան ուզում է քրիստոնյա ազգաբնակությունը իր հովանավորության տակ առնել: Այս տեղեկություններից հետո ժողովը որոշում է դարձյալ կանգնել մեր նախկին տեսակետի վրա: Գերմանիա ուղարկել Ա. Զոհրաբյանի[24] հետ նաև Հ. Օհանջանյանին:

Այնուհետև նախագահը *քվեարկում է Ն. Աղբալյանի առաջարկը՝ ուղարկել Բաթում մեկին ևս բանակցությունները շարունակելու և իմանալու Թուրքիայի վերջնական պայմանները մեր նկատմամբ:*

Ս. Մամիկոնյան. *Առաջարկում է բոլորովին նոր մարդկանց ուղարկել:*

Որոշումն. *Որոշվում է Բաթում ուղարկել երկու նոր մարդ: Ապա առաջարկ է լինում, իբրև նպատակահարմար քայլ ուղարկել Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցչին հաշտության հող պատրաստելու համար:*

Ս. Հարությունյանը և Մ. Պապաջանյանը համաձայն են, եթե տրվի իրենց

---

[22] *Վերջին երկու խմբակցությունների անվանումը լրացվել է ձեռագիր:*

[23] *1915 թ. հուլիսից Կ. Պոլսում Գերմանիայի ռազմական կցորդ, այնուհետև դեսպանատան ռազմական լիազոր, գեներալ-մայոր Օտտո ֆոն Լոսովը 1918 թ. մայիսի 6-ից գլխավորել է իր երկրի պատվիրակությունը, որը Խալիլ բեյ Մենթեշեի ղեկավարած թուրքական ներկայացուցիչների հետ Բաթումում բանակցություններ է վարել Անդրկովկասի պատվիրակության հետ: Մայիսի 15-ին, Սեյմի գործելու պայմաններում, Ն. Ժորդանիայի հետ բանակցություն է սկսել Վրաստանի անկախության մասին: Մայիսի 21-ին Բաթումում քննարկվել են Վրաստանի ապագա սահմանները, հաջորդ օրը՝ հավանություն է ստացել անկախության հռչակագիրը, 24-ին խմբագրվել է վրաց-գերմանական ժամանակավոր դաշնագիրը (տե՛ս* On the Road, pp. 183–184*):*

[24] *1918 թ. փետրվարի 23-ից Արշակ Զոհրաբյանը Անդրկովկասյան սեյմում եղել է մենշևիկների խմբակցության անդամ: Մայիսի 20-ին ՀԱԽ-ը նրան ու Հ. Օհանջանյանին գործուղել է Բաթում՝ Օ. ֆոն Լոսովի մոտ՝ Գերմանիայի աջակցությունը ստանալու հանձնարարությամբ:*

լիազորություն բոլոր միջոցները սպառելուց հետո ուլտիմատումն ընդունելու:

Նախագահը *ասում է, որ այդ լիազորությունը կտրվի, եթե երաշխիք ունենան, թե տաճիկները չեն գա: Քանի որ այդ չկա, ավելի լավ է նոր կառավարություն կազմել պատասխանատու խորհրդի առաջ, որ նա բանակցությունները շարունակի:*

Նորից վեճ է ծագում Բաթում մարդ ուղարկելու մասին և այն Հայ Ժողովրդական կուսակցությունից: Ոմանք ավելորդ են գտնում նոր մարդ ուղարկել, մյուսները նպատակահարմար են համարում, բայց մեր որոշած սահմաններում: Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները պնդում են իրենց պայմանի վրա, որ առանց խոշոր լիազորների նրանք չեն գնա:

Վիճաբանությունների ընթացքում լուր ստացվեց, որ Ա. Խատիսյանը և Հ. Քաջազնունին եկել են, ուստի ժողովի շարունակությունը հետաձգվեց երեկոյան ժամը 5-ին, որպեսզի նրանց զեկուցումը լսվի և ապա որոշումներ արվեն: …

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 232 դարձ. – 235 դարձ.:

№ 2

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, մայիսի 28, 1918 թ., 17:30 – 19:00, նիստ ՃԺԵ (115)

Նախագահում էր՝ Ա. Ահարոնյան, ներկա էր ամբողջ կազմը՝ նաև Ա. Խատիսյան և Հ. Քաջազնունի:

I. Ուլտիմատումի խնդիրը:

Ա. Խատիսյանը *զեկուցում է. Ա. Չխենկելին մի հեռագիր ստացավ Ն. Ժորդանիայից և Ն. Ռամիշվիլուց, որ Սեյմը ցրված է, Վրաստանը անկախ է հայտարարված, որից հետո այլևս գոյություն չունի կառավարություն և պատվիրակություն: Թեև ինքը այն կարծիքի էր, որ կարող էր անկախ Կովկաս մնալ առանց վրացիների: Գիշերը ժամը 22-ին*[25] *ստացվեց ուլտիմատումը, մենք շատ խոսեցինք հատկապես վրացիների հետ, որոնց մեղադրում էինք*[26]*: Հետևյալ օրը Ա. Չխենկելին հայտնեց, որ ինքը այլևս նախագահ չէ, մենք առարկեցինք, որ սպասի մինչև պատասխան ստանալը, բայց նա չհամաձայնվեց, և մենք խիստ խոսակցություն ունեցանք Ա. Չխենկելու հետ: Նա դիմեց Օսմանյան պետություն և Էնվեր փաշային և ստացավ շնորհավորանք անկախության առթիվ: Մենք չգիտեինք հայկական զավառների վիճակն ու մեր դիրքը: Հետո իմացանք, որ ուլտիմատումը ուղղված է նաև վրացիներին, որ չէին*

---

[25] *Խոսքը մայիսի 26-ի մասին է:*

[26] *Մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը Ն. Ժորդանիան Բաթումում հանդիպել է Ա. Խատիսյանին: Նա զրուցակցին տեղեկացրել է Վրաստանի անկախանալու որոշման մասին, քանի որ նրա ժողովուրդը «չէր կարող խորտակվել» հայերի հետ (տե՛ս Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 65,* On the Road, pp. 184–185*):*

սպասում: Մենք նորից տեսանք Վեհիբ փաշային և Խալիլ բեյին: Մեր հարցին, թե ինչու՞ բանակցությունների ընթացքում շարունակում եք ձեր արշավանքը, Վեհիբ փաշան պատասխանեց, որ դրանք միջոցներ են մեր պահանջները ընդունել տալու համար. գրավված են բոլոր կարևոր ռազմական կետերը՝ Ջալալ-Օղլի, Ղարաքիլիսա, բայց մինչև ուլտիմատումի վերջանալը առաջխաղացում տեղի չի ունենա: Լևոն Սար[գ]սյանի[27] *կարծիքով ժողովուրդը հանգիստ է, խաղաղ և խնդրում է ալյուր, մթերք: Ալեքսանդրապոլում 11 թուրք է կախվել կարգը վերականգնելու համար: Ինձ թույլ տրվեց այցելել Ալեքսանդրապոլ: Խաղաղ ժողովուրդը չի կռվում, շարունակեց նա, բայց հայ զինվորները փայլուն դիմադրություն են ցույց տալիս, իբրև արժանի հակառակորդներ: Սակայն որքան ձեր զորքերը քաջ լինեն, չեն կարողանալու մեզ հաղթել, որովհետև չունեք պետական ապարատ: Եթե ուլտիմատումը չընդունեք, վերջացրեց նա, մենք կշարունակենք առաջ գնալ դեպի Թիֆլիս, Երևան: Սահմանների մասին խոսեք Խալիլ բեյի հետ:*

Խալիլ բեյն ասաց, որ իբր թե շատ է խոսել Թալեաթի հետ, բայց անօգուտ. ուլտիմատումը պետք է ընդունել, հակառակ դեպքում ամեն ինչ կորած է: Ճիշտ է, ձեր երկիրը շատ փոքր է, բայց հայ ժողովուրդը աշխատասեր է, և եթե վրացիներուն թուրքերն իրենց սահմաններից զիջեն, իրենք ոչինչ չեն ունենա: Չի խանգարի Կ. Պոլիս գնալ և այնտեղ աշխատել այդ ուղղությամբ, թերևս հաջողություն ունենա: Այնուհետև ուլտիմատումի ժամանակը երկարացրեց մինչև ցայս երեկոյան ժամը 8-ը, իսկ մինչ այդ պատերազմական գործողությունները դադարելու են:

Հ. Քաջազնունի. *Վեհիբ փաշան իր վրա լավ տպավորություն է թողել՝ իբրև ազնիվ զինվորական: Կարդում է իր գրությունը նրա հետ ունեցած խոսակցության մասին: Նրանց հիմնական նպատակն է գրավել բոլոր ռազմական կարևոր կետերը՝ իրենց ճանապարհը ապահովելու համար: Խալիլ բեյն ասաց, որ եթե Անդրկովկասյան կառավարություն չլինի, ուլտիմատումը վերաբերում է նրան կազմող հատվածներին: Ուլտիմատումի գլխավոր կետը սահմանների խնդիրն է, մյուսների նկատմամբ հնարավոր է փոփոխություն: Եթե նրանց պայմանները չընդունվեն, հետևանքները շատ լուրջ կլինեն: Ստորագրելուց հետո ավելորդ չի լինի Կ. Պոլիս գնալը:*

Ա. Խատիսյան. *Շարունակում է. Մ. Ռասուլ-զադեն*[28] *սրամտորեն նկատեց, թե ինչո՞ւ գերմանական զինվորներ կարող են լինել, իսկ թուրքական՝ ոչ, թեև իրենք դեմ են այդպիսի քայլերի: Հետո հայտնեց, որ իրենց Ազգային ժողովը Գանձակում հայտարարելու է իրենց անկախությունը, մենք էլ ասացինք, որ*

---

[27] *Կենտրոնական կառավարության ներկայացուցիչը Ալեքսանդրապոլում, որին նշանակել են 1920 թ. նոյեմբերի 5-ին: Լ. Սարգսյանը քաղաքագլխի պաշտոնակատար էր՝ քաղաքացիական գործերի ոլորտում (տե՛ս* R. Hovannisian. The Republic of Armenia, vol. IV Between Crescent and Sickle: Partition and Sovietization, Berkeley and Los Angeles, 1996, pp. 265, 273*):*

[28] *Մուսավաթի հիմնադիր Մեհմեդ Էմին Ռասուլ-զադեն թուրք-անդրկովկասյան բանակցությունների ժամանակ եղել է երկրամասի պատվիրակության թարգմանիչ Տրապիզոնում 1918 թ. մարտ 14-ից ապրիլի 14-ը և լիիրավ պատվիրակ՝ Բաթումում:*

մեր Ազգային Խորհուրդը հանդիսանում է իշխանություն: Ուլտիմատումի նկատմամբ խոսակցություն ունեցա Ա. Չխենկելու հետ և մի քանի հարցեր տվի: Վճռապես դեմ է ստորագրելուն, Ն. Նիկոլաձեն[29], Զ. Ավալովը[30] կողմնակից է, իսկ Ա. Չխենկելին կարծիք չունի: Երկրորդ հարցին, թե ինչ կապ ունեք գերմանացիների հետ, նրանք ասացին, որ միայն ապահովության երաշխավորությունն է, բայց կարծում է, որ պրոտեկտորատի երկյուղ կա: Հավանորեն Գերմանիայի և Տաճկաստանի միջև գաղտնի համաձայնություն կա[31] շրջանների ազդեցությունների նկատմամբ:

Մ. Հաջինսկին նշանակված է արտաքին գործոց մինիստր[32] և լիազորություն ունի ստորագրելու: Այժմ մեր լիազորությունները վերջացած են, և Ազգային Խորհուրդը պետք է պատասխան տա հետագա անելիքի նկատմամբ:

Նախագահը *հարցնում է Ա. Խատիսյանի և Հ. Քաջազնունու կարծիքները ուլտիմատումի մասին:*

Ա. Խատիսյան. *երեք ամիս է, այդ նյութի վրա է մտածում և եկել է այն եզրակացության, որ մեր ծանր դրության պատճառները երեքն են. 1) Բաքվի դեպքերը[33] և դաշնակցությունը, 2) Հողային ռեֆորմների[34] անժամանակ հրա-*

---

[29] *Նիկոլայ Նիկոլաձեն անդրկովկասյան պատվիրակության անդամ էր՝ ձայնի իրավունքով:*

[30] *Զուրաբ Ավալով (Ավալիշվիլի). վրացական պատվիրակության խորհրդական, մայիսի 25-ին Բաթումում կազմել է Վրաստանի անկախության հռչակագիր:*

[31] *Այդ գաղտնի համաձայնագիրը ստորագրել են դեռև 1914 թ. օգոստոսի 2-ին ու 6-ին (տե՛ս* S. Payaslian. United States Policy Towards the Armenian Question and the Armenian Genocide, NY, 2005, p. 47*):*

[32] *Բաքվի մահմեդական խորհրդի նախագահ, 1917 թ. հուլիսի 12-ից՝ Մահմեդական ազգային խորհրդի անդամ, եղել է Անդրկովկասյան հանրապետության առևտրի նախարար, եռակողմ պատվիրակությունների անդամ Տրապիզոնում և Բաթումի կոնֆերանսում:*

[33] *Ստ. Շահումյանի՝ թուրքերին ուղղված Բրեստի պայմանագիրը չխախտելու պահանջի հրապարակման շեմին ադրբեջանցիների «վայրի դիվիզիայի» ջոկատը ժամանել է Բաքու, ուր 1918 թ. մարտի 30-ին հարձակվել է կարմիրգվարդիականների վրա: Նրանց զինաթափել են, իսկ հետագա հանրահավաքներ ու հաջող ընթացող բանակցությունները Բաքվի խորհրդի և մահմեդական բնակչության միջև ընդհատվել են ադրբեջանցիների հրաձգությամբ: Քաղաքի Հայոց Ազգային խորհուրդը՝ Ա. Գյուլխանդանյանի գլխավորությամբ, իրեն հայտարարել էր չեզոք: Համազասպ Սրվանձտյանի հրամանատարությամբ Հայոց Ազգային խորհուրդն ուներ երկու գունդ՝ 4.000–6.000 զինվոր: Արևմտյան ռազմաճակատից վերադարձող հայ ռազմիկները չէին կարողանում մեկնել Կարս, Թիֆլիս կամ Երևան. երկաթուղին ուղեկապել էր Մահմեդական խորհուրդը:*

***Մարտի 31-ից տեղի ՀԱԽ-ի ուժերը Արմենիքենդի պահակության համար միացան բոլշևիկներին, այլապես Բաքվում սովետական իշխանությունը տապալվում էր: Ապրիլի 1-ին Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտեի ծանր հրետանին 6 ժամ ռմբակոծել էր** մահմեդական թաղամասերը, իսկ մուսավաթի*

տարակումը և 3) Սուրմալուի և Երևանի հակաթուրքական դեպքերը[35]*: Այս բոլոր հանգամանքները և մեր զինվորական դրության անհուսալիությունը*[36] *այն*

կողմից վերջնագիրը ստորագրելուց հետո էլ կռիվները չէին դադարել: Այդ պահից ի վեր ու հաջորդ օրը հայկական զորամասերն անցան ակտիվ գործողությունների՝ կրակի մատնելով հակառակորդի թաղերը: Երկու կողմերը տվեցին 3 հազար սպանված, որի մեծ մասը մուսավաթականներն էին, իսկ հասարակական-դասակարգային պատերազմը վերաճել էր ազգամիջյան կռվի: 1918 թ. ապրիլի 9-ին նավթագործ, մուսավաթի անդամ ու նրա գնդերն ֆինանսավորող Հ. Զ. Թագիևը, որի կյանքն ու տունը այդ օրերին պահպանում էր ՀԱԽ-ը, հեռագրել է Թիֆլիս՝ Սեյմ, պնդելով, թե հայ զինվորները խնայել ու պաշտպանել են 14.000 մահմեդականների: Մուսավաթի պարտությունը ցույց տվեց, որ քաղաքը գավթելու համար նա ուժ չունի, և այդ խնդիրը հնարավոր չէ լուծել առանց օտտոմանյան կանոնավոր բանակի օգնության (տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 174 դարձ., Ս տ. Շ ա հ ն ա զ ա ն. Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 144, հ. Г. Ш а у м я н. *Նշվ. աշխ., հ. 2, էջ 181, 209, 211, 214, 230, 232, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ., խմբ. Ա. Վիրաբյան, կազմ. Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Երևան, 2003, էջ 18, 21, Լ. Ա. Խ ո ւ ր շ ո ւ դ յ ա ն. Ստեփան Շահումյան, Երևան, 1959, էջ 200–204;* R. P i p e s. The Formation of the Soviet Union. Communism and Nationalism 1917–1923, Cambridge, Mass., 1964, p. 201; R. S u n y. The Baku Commune 1917–1918. Class and Nationality in the Russian Revolution, Princeton, N. J., 1972, pp. 215–224, 220)*:*

[34] *1917 թ. նոյեմբերի 27-ին Անդրկովկասի Կոմիսարիատը հրապարակել է դեկրետ զեմստվաներ մտցնելու մասին: Այն կիրառվում էր անվիճելի ճանաչված շրջաններում, իսկ վիճելի հողերի թվում հայտնվել էր Երևանի ամբողջ նահանգը, Կարսի մարզը՝ բացառությամբ Արդահանի և Օլթիի, Գանձակի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշվա, Զանգեզուրի, Կարեագինոյի, Ախալքալաքի և Բորչալուի գավառները (տե՛ս Է. Ա. Զ ո հ ր ա բ յ ա ն. Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, էջ 13–14):*

[35] *Էրզրումի անկումը սաստկացրել է քառսն ու հայ-ադրբեջանական բախումները Երևանի նահանգում, ուր 400.000 թաթարներ քանդել էին երկաթուղու պաստառն ու կամուրջները: Նրանք ընդվզում էին Երևանի արվարձաններում, դարանակալում էին ռազմական պարեկներին ու ոստիկաններին, հարկեր չէին մուծում: Դրան հակազդելով՝ հայկական զորքը երկաթուղու երկայնքով ավերեց 20 գյուղ, նրանց թաթար բնակիչներին հալածեցին ու քշեցին: 1918 թ. մարտի 5-ին Երևանում տեղի ունեցած կռիվները մեղմացվում էին հայոց ու մահմեդական խորհուրդների համատեղ գործողություններով: Մարտ ամսվա ընթացքում այդ անկարգությունների հարցը երկու անգամ լսվեց Անդրկովկասյան սեյմում (տե՛ս* On the Road, pp. 143–144*; Է. Ա. Զ ո հ ր ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 46–48):*

[36] *Խոսքը Էրզրումի անկման մասին է, որը վերջ դրեց Արևմտյան Հայաստանի համար պայքարին: Էրզրումի բերդում կար 400 թնդանոթ, 11.000 հրացան, 2 մլն փամփուշտ, համազգեստ ու մեկ տարվա նպար: Այնտեղ գտնվող 32տ դիվիզիան ու 65տ վառոդը նահանջելիս չէին պայթեցրել, քանի որ քաղաքում մնում էր 20.000 մահմեդական բնակչություն: Դա, սակայն,*

վիճակն է ստեղծել մեզ համար, որ մենք հարկադրված ենք ընդունելու ուլտիմատումը: Կռիվը շարունակելով՝ մենք մեր հողը կկորցնենք, իսկ ընդունելով՝ կդառնանք մի իրավական պետություն ապագայի ակնկալություններով: Ռուսների վրա հույս չունի, Անգլիայից և Ֆրանսիայից օգուտ չի տեսել, միակ հույսը մնացել է Գերմանիան: Իհարկե, ուլտիմատումը կարող է չփրկել մեր տերիտորիան, միակ երաշխիքը կարող է լինել չորս պետությունների ստորագրումը: Եթե տաճիկներին բնավ չենք հավատում, այն ժամանակ բանակցություններն ավելորդ են: Բայց ինքը կարծում է, որ մենք ընդունելով ուլտիմատումը դառնում ենք օբյեկտ միջնորդության ապագայի հեռանկարներով: Դրա համար անհրաժեշտ է, որ Ազգային Խորհուրդը հայտարարի անկախություն, տեղափոխվի մի հայկական վայր, իհարկե ստորագրելով ուլտիմա-տումը: Եթե չընդունենք, մեզ սպառնում է կոտորած, այդ կարծիքի է նաև Օ. ֆոն Լոսովը: Ուլտիմատումն ստորագրելուց հետո գնալ Կ. Պոլիս և վիճելի հարցեր լուծելու և նպաստավոր պայմաններ ապահովելու:

Ս. Հարությունյան. *հայտնում է, որ բոլոր կուսակցությունները դեմ են ուլտիմատումին՝ բացի Հայ Ժողովրդական կուսակցությունից:*

Նախագահը. *հարցնում է, ի՞նչ գարանտիաներ կան, որ մնացած հողը չեն գրավի, զորքը չեն տանի և ժողովրդին չեն կոտորի:*

Հ. Քաջազնունի. *Իմ խորին համոզումով, ուրիշ ելք չկա, բացի ուլտիմատումն ընդունելը, ոչ մի գարանտիա չկա:*

Խ. Կարճիկյան. *Առաջարկում է այս խոսակցություններից հետո ընդհատել ժողովը, վերաքննել այդ խնդիրը ֆրակցիաներում և ապա հենց այս երեկոյան, կրկին հավաքվել և վերջնական որոշումը տալ ուլտիմատումի նկատմամբ:*

Ժողովը ընդունում է այդ առաջարկը:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 235 դարձ. – 237:

№ 3

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, մայիսի 28, 1918 թ., 22:30 – 00:45, նիստ ՃԺԶ (116)

Նախագահում էր՝ Ա. Ահարոնյան, ներկա էին՝ Ն. Աղբալյան, Ս. Վրացյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Բաբալյան, Ս. Հարությունյան, Ղ. Տեր-Ղազարյան, Տ. Բեկզադյան, Ս. Մամիկոնյան, Ա. Երզնկյան, Մ. Հարությունյան, Մ. Պապա-

---

օսմանյան հրամանատարներին չէր խանգարել օգտվել ռազմավարից և հայերին մեղադրել վայրագության ու ազգամիջյան հանցագործությունների մեջ: Գաղթականների և 5.400 հայ զինվորների հեռանալու ժամանակ քանդել ու այրել էին իրենց տեղաշարժին խոչընդոտող գյուղերը: Նրանց հետապնդող 3 թուրքական դիվիզիաները վարում էին համընդհանուր, կործանարար պատերազմ (տե՛ս A. Ter Minassian. *Նշվ. աշխ., էջ 61):*

ջանյան, Մ. Բունիաթյան[37]*, Հ. Քաջազնունի, Ա. Խատիսյան:*

I) Ուլտիմատումի խնդիրը:

Ուլտիմատումն ընդունելու կողմնակից են Հ. Հ. Դաշնակցությունը և Հայ Ժողովրդական կուսակցությունը: Սոցիալ-դեմոկրատները հայտնում են, որ ժամանակ չեն ունեցել ժողով կայացնելու, ուստի իրենց առավոտյան կարծիքը մնում է ուժի մեջ: Սոցիալիստ-հեղափոխականները չկան: Տ. Բեկզադյանը և Ս. Մամիկոնյանը մնում են նախորդ կարծիքին:

Որոշումն. *Որոշվում է ուլտիմատումն համարել ընդունված, իսկ ձայները հաշվել վաղը:*

Հարց են տալիս, թե ո՞վ է ուլտիմատումն ընդունում, Ազգային Խորհուրդը, թե՞ մի ուրիշ մարմին, հայոց կառավարությունը, Ազգային Խորհրդից կազմած:

Ս. Հարությունյանն *առաջարկում է Ազգային Խորհուրդն հայտարարել [Հայաստանի] ժամանակավոր կառավարություն: Կարելի է Ազգային Խորհուրդը դարձնել մի տեսակ պառլամենտ և կազմել կառավարություն՝ թեկուզ և դրսի մարդկանցից: [Այդ վերջին ձևը շատ էլ հարմար չէ*[38]*:] Պետք է այնպիսի պատվիրակություն ուղարկել, որ թուրքերի վստահությունը վայելի:*

Ս. Վրացյանն *ըստ կարգի նկատում է, որ խնդիրը կապ ունի անկախության հարցի հետ, մեր կուսակցության մեջ այդ հարցը դեռ ծեծվում է: Հարմար է, որ ֆրակցիաները մի եզրակացության գան և ապա խնդիրը լուծել:*

Ս. Մամիկոնյանը *հայ գավառները համարում է Ռուսաստանի մաս: Ազգային Խորհուրդը կարող է կարգադրություն անել նրա մասին: Մինիստրություն ընտրելու կարիք չկա: Ազգային Խորհուրդը կարող է ինքը պատվիրակներ ուղարկել:*

Ռ. Տեր-Մինասյան. *Ինչն էլ լինի, պետք է մի կառավարություն, դա Ազգային Խորհուրդն է, որ, ըստ էության, արդեն եղած է կառավարություն: Պետք է միայն որոշ փոփոխություններ մտցնել կազմի մեջ:*

Ս. Հարությունյան. *Պետք է լինի Հայաստանի կառավարություն, առանց սահման որոշելու: [Բայց ո՞վ է այն ստեղծում:] Խորհուրդը պետք է իրան պառլամենտ հայտարարի և կազմի կառավարություն: Պետք է կառավարության ղեկը հանձնել ավելի մեղմ կուսակցության՝ հանձնարարելով մեկին՝ կազմելու կառավարություն, դրանով կառավարությունը բխած կլիներ մի իրավազոր մարմնից:*

Հ. Քաջազնունին *առաջարկում է կարդալ իրենց գրությունը թուրքերին՝ Ազգային Խորհրդի կառավարչական ֆունկցիաներ ստանձնելու մասին:*

Ա. Խատիսյանը *կարդում է այդ թուղթը:*

Մ. Պապաջանյան. *Թուրքերն*[39] *իրենց Մեյմի ֆրակցիան հայտարարել են*

---

[37] *Մենտոր Բունիաթյան. անվանի տնտեսագետ, ազատական տնտեսության կողմնակից: 1918 թ. մայիսին եղել է հայկական պատվիրակության խորհրդական Բաթումում, հունիս–հոկտեմբեր ամիսներին կատարել է ՀՀ առաքելության տնտեսական խորհրդականի պարտականությունները Կ. Պոլսում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 5, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 253, Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 937):*

[38] *Ձեռագիր տարբերակում այս նախադասության վրա գիծ է քաշվել:*

[39] *Ադրբեջանցիները:*

պառլամենտ, լրացրել են զանազան հիմնարկություններից և ընտրել են կառավարություն: Վրացիք, հայտնի է, ինչպես են կազմել: Մնում ենք մենք, որ պիտի անկախություն հայտարարենք: Արդեն թուրքերը վաղը հայտարարելու են: Պետք է խոսել նրանց հետ [մեր] սահմանների մասին, անվանել պատվիրակներ, որ գնան բանակցեն նրանց հետ: Պետք է [կառավարություն ստեղծել: Պիտի ունենալ] մի պառլամենտ, որը կարող է լինել Ազգային [ժողովը[40]], լրացրած կազմով: Նա էլ կընտրի մինիստր-նախագահ:

Ա. Խատիսյան. *Վաղը մինչև պատգամավորների գնալը [պետք է Հայաստանն անկախ հայտարարվի, որ բանակցեն Հայաստանի հետ:] Պետք է օգտվել [բոպեից] և թուրքերին ճանաչել տալ անկախ Հայաստանը: [Մենք արդեն ակամա անկախանում ենք:] Մանդատը պետք է [անկախ] Հայաստանի կառավարության անունից լինի: Դրա համար անհրաժեշտ է, որ Ազգային Խորհուրդը իրեն ժամանակավոր կառավարություն հայտարարի, հետո կարող է կազմը փոխել: Պետք է [նախապես] որոշել, թե ուլտիմատումի որ կետերն են անընդունելի:*

Ա. Երզնկյան. *Կառավարություն անհրաժեշտ է նաև պետական [ժառանգությունը[41]] բաժանելու համար: [Պետք է աշխատանքի բաժանում լինի:] Ազգային Խորհուրդը պետք է օրենսդրական մարմին դառնա, որ և կստեղծի իր կառավարությունը: Այդ բանը կարելի է անել վաղվանից և մեր պատվիրակները կերթան և նրա անունից կբանակցեն:*

Տ. Բեկզադյան. *Կառավարություն պետք է կազմել փլուզումից հետո հարաբերությունները մշակելու և երկիրը վարելու համար: Բայց տարօրինակ է նմանության այդ տենչը, որին հետևում ենք [ուրիշներին]: Վրացիք պատրաստ ապարատ ունեն, մենք անկախ Հայաստան ենք հայտարարում, բայց ի՞նչ բովանդակություն [ունի այդ հայտարարում.] անհայտ է: Ինչ մարմնի անունից էլ կգնան մեր պատվիրակները, թուրքերը կընդունեն, ինչպես և արդեն ասել են: Շրջահայաց լինենք. Ազգային Խորհուրդը [անվանենք] կառավարություն, առանց անկախություն [հայտարարելը: Խորհուրդն արդեն կառավարություն է,] մեր արտաքին գործոց վարիչը կարող է բանակցել, բայց ոչ անկախ Հայաստանի անունից:*

Ղ. Տեր-Ղազարյան. *Այդ [ամենը] ձևականություններ են մի ձևական ակտ կատարելու համար, պարզ է, որ [պիտի] Հայաստանի կառավարություն լինի, ընտրված Ազգային Խորհրդի կողմից:*

Մ. Բունիաթյան. *Որքան էլ փոքր լինի մեր հողը, բայց և այնպես պետք է ասենք կամ անկախ ենք և կամ Ռուսաստանի մի մասը: Օ. ֆոն Լոսովին և Խալիլ բեյին տված թղթերով արդեն ասել ենք, որ Ազգային Խորհուրդը գերագույն մարմին է: Բայց այդ Խորհրդի կողքին պետք է մի մարմին լինի, որ վավերացնի դաշնագիրը: Երկու-երեք շաբաթում պետք է այդ մարմինը ստեղծենք:*

Նախագահի *առաջարկով որոշվում է պատվիրակություն ընտրել, իսկ վաղը որոշել, թե ում անունից ուղարկել՝ Ազգային Խորհրդի, թե [մեր] կառավարության անունից:*

Ընտրվում են՝ Ա. Խատիսյան, Մ. Պապաջանյան, Հ. Քաջազնունի:

---

[40] *Մեքենագիր տարբերակում՝ Ազգային Խորհուրդը:*

[41] *Մեքենագիր տեքստում՝ գույքը:*

[Ա. Բաբայյան. *Պետք է կարողանանք հրամանատարին հայտնել, որ որոշած ենք ուլտիմատումն ընդունել և պատվիրակություն ուղարկել:*

Ռ. Տեր-Մինասյան *հակառակ է. Նախքան պայման կապելը հայտնել իրենց հրամանատարին այդ մասին, քանի որ կռիվները պիտի ընթանան իրենց կարգով:*

Մ. Պապաջանյան *կողմնակից է տեղեկացնելուն:]*

Որոշումն. *Որոշվում է այս մասին շիֆրով հայտնել Թ. Նազարբեկյանին այն պայմանով, որ գաղտնիք պահի մինչև ուլտիմատումի վերջնական ստորագրումը:*

Սոցիալիստ-հեղափոխականները գալիս են ժողովի վերջում և հայտնում են, որ իրենց ֆրակցիան ուլտիմատումի նկատմամբ մնում է նախկին կարծիքին, այսինքն՝ կողմնակից է չստորագրելու:

Թուրքերի հետ բանակցելու համար ընտրում են՝ Ա. Երզնկյան, Ռ. Տեր-Մինասյան, Մ. Պապաջանյան, Ա. Ստամբոլցյան: …

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 237 – 238, գ. 120, թ. 9–10:

№ 4

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, մայիսի 29, 1918 թ., 20:00 – 23:15, նիստ ՃԺԷ (117)

Նախագահում էր՝ Տ. Բեկզադյան, ներկա էին՝ Ս. Մամիկոնյան, Լ. Թումանյան, բժ. Ա. Բաբայյան, Ն. Աղբալյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Ահարոնյան, Գ. Տեր-Հարությունյան, Ա. Ստամբոլցյան, Հ. Բեկզադյան[42] և Ա. Երզնկյան: [Ներկա էին նաև՝ Ա. Սահակյան, Ս. Հարությունյան:]

Լիկվիդացիայի խնդիրը:

Ա. Սահակյանը *հայտնում է, որ Անդրկովկասյան կառավարության գույքն ու հիմնարկությունները իբրև ընդհանուր սեփականություն պետք է լիկվիդացիայի ենթարկվեն մյուս ազգերի համահավասար պայմաններով:*

Այս հարցի առթիվ արվում են հետևյալ առաջարկները:

1. Հրավիրել վրաց ազգային Խորհրդի նախագահին ու մի քանի անձանց և նրանց հետ քննել խնդիրը:

2. Ընտրել լիազորներ բոլոր մինիստրություններին կից:

3. Թուրքերի[43] հետ համաձայնության գալ այդ գործի համար:

4. Լիազոր ուղարկել համահավասար իրավունքով մինիստրներին համակովկասյան գույքի նկատմամբ:

Որոշումն. *Որոշվում է տեսակցել Ն. Ժորդանիայի հետ, նրա համաձայնությունն առնել և միաժամանակ ընտրել լիազորներ մինիստրներին կից հա-*

---

[42] *Հովհաննես Բեկզադյան. 1918 թ. փետրվարի 23-ից Սեյմում մենշևիկների խմբակցության անդամ:*

[43] *Ադրբեջանցիներ:*

մահավասար իրավունքներով լիկվիդացիոն գործը վարելու համար, տալով այդ մարդկանց լիազորություն Ազգային Խորհրդի անունից գործերը կարգավորելու՝ ըստ իրենց բարեհայեցողության:

Ն. Ժորդանիայի հետ տեսակցելու համար ընտրվում են Ս. Մամիկոնյանը և Տ. Բեկզադյանը: Լիազորներ ընտրվում են հետևյալ անձինք.

*1) ներքին գործոց և մատակարարման կոմիտեն (*ՍՏՎՌՑպՑ բվՈՈՋպվՌÿ*)՝ Ա. Երզնկյան, 2) պարենավորման՝ Ա. Սահակյան, 3) երկրագործության՝ Արշակ Թադևոսյան, 4) ֆինանսների՝ Գ. Տեր-Ղազարյան, 5) ճանապարհների, հաղորդակցության՝ Լ. Ղույյան, 6) լուսավորության՝ Ս. Տիգրանյան, 7) զինվորական՝ գեն. Մ. Արեշյան, 8) իրավաբանության՝ Գ[ևորգ] Խատիսյան:*

II. Թիֆլիսի պաշտպանության շտաբի մեջ ունենալ մեր ներկայացուցիչը:

Հ. Բեկզադյանը *գտնում է, որ Թիֆլիսի ինքնապաշտպանության խնդրով հայերը մեծապես շահագրգռված են և պետք է, որ ակտիվ մասնակցություն ցույց տան: Անհրաժեշտ է, որ Ազգային Խորհրդի ներկայացուցիչը մասնակցի այստեղ հավասար իրավունքով: Առաջարկում է ընտրել իբրև ներկայացուցիչ Ս. Մալխասյանին: …*

II.[44] *Հեռագրել Խալիլ բեյին, որ Ազգային Խորհրդի պատվիրակությունը արդեն մեկնել է Բաթում:*

III. Հանձնարարել նախագահության, որ հայ ժողովրդին մի հայտարարություն անի կատարվող անցուդարձերի մասին:

IV. Ամեն միջոց գործ դնել, թեկուզ լետչիկներով կամ մարդու միջոցով իմաց տալ Դիլիջան, Երևան կատարվող դեպքերի մասին, հանձնարարելով Ն. Աղբալյանին նամակ պատրաստելու դրա համար և Մ. Արզումանյանին՝ վրաց կառավարության հետ բանակցելու և դյուրություններ ստանալու նամակները տեղ հասցնելու համար:

V. Գաղթականների դրությունը Սանահինում:

Ս. Հարությունյանը *հայտնում է, որ Սանահինի ձորում ահագին գաղթականություն է հավաքված և գտնվում է սարսափելի պայմանների մեջ: Ամեն միջոց գործ դնել նրան տեղափոխելու: Բացի այդ, ամբողջ Ախալքալաքի հայությունը տեղահան է եղել, միջոցներ ձեռք առնել նրանց հետ դարձնելու:*

Որոշումներ. *1) Հանձնարարել Մ. Արզումանյանին բոլոր միջոցները գործ դնել Սանահինի ձորում գտնված գաղթականությունը տեղափոխելու, տալով նրան լիազորություն Ազգային Խորհրդի կողմից:*

2) Ախալքալաք ուղարկել լիազորներ, որ համոզեն նրան հետ դառնալու:

3) Մի ընդհանուր կոչ ուղղել հայության, որ տեղից չշարժվի, ի նկատի ունենալով այն կործանիչ հետևանքները, որ անխուսափելիորեն սպասում է գաղթող ժողովրդին: …

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 238 դարձ. – 239:

№ 5

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

[44] *Բնագրում երկրորդ կետը կրկնվել է:*

Թիֆլիս, մայիսի 30, 1918 թ., 9:00 – 11:30, նիստ ՃԺԸ (118)

Նախագահում էր՝ Ա. Ահարոնյան, ներկա էին՝ Տ. Բեկզադյան, Լ. Թումանյան, Ս. Մամիկոնյան, Ս. Հարությունյան, Ա. Ստամբոլցյան, Հ. Բեկզադյան, Ա. Բաբայան, Ն. Աղբալյան, Ռ. Տեր-Մինասյան, Մ. Հարությունյան: [Ներկա էին նաև՝ Մ. Արզումանյան, Մ. Արեշյան, Ա. Խոնդկարյան, Լ. Առաքելյան]:

I. Կոչ հայ ժողովրդին:

Նախագահը կարդում է պրեզիդիումի հետևյալ հայտարարությունը.

Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց Ազգային Կառավարություն, Ազգային Խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար:

II. Սպասելով այս բանակցությունների (Օսմանյան) վախճանին՝ Հայոց Ազգային Խորհուրդը վճռապես հրահանգում է թե արդեն՝ թշնամուց գրաված, և թե վտանգի տակ եղած հայ գավառների ազգաբնակությանը դադարեցնել գաղթը, մնալ իրենց տեղում, որովհետև ինչ էլ լինեն տեղական պայմանները, տեղահանությունը շատ ավելի կորստաբեր է ու կործանարար, քան ծանր պայմաններում հայրենի հողի վրա ապրելը:

Նախագահը *կարդալուց հետո հնարավոր է համարում հետևյալ կարելիությունները.*

1. Ուլտիմատումն ընդունվում է, Երևանը ապահովվում, կառավարություն կազմվում, համարելով կոնֆլիկտը վերջացած:

2. Որ օսմանյան ուլտիմատումին այնպիսի բացատրություն կտան, որ այլևս հնարավորություն չի լինի ընդունել, և մեր պայքարը էլ ավելի պիտի սաստկանա և օրհասական դառնա: Եվ ուրեմն անհրաժեշտ կլինի կազմելու թերևս Հայաստանի ապահովության կոմիտե և ոչ կառավարություն: Պետք է երկու դեպքն էլ ի նկատի ունենալ և նախապատրաստվել:

Նախագահությունը հանձնում է Տ. Բեկզադյանը *և կարդում է Վլադիկավկազից ստացած տեղեկությունները, Բաքուն ամուր է և պետք է կռիվը շարունակվի: Ուղարկվում է այնտեղ օգնություն, առայժմ ռազմամթերք: Տեղական ժողովուրդն ավելի հակված է դեպի թուրքերը, բայց առայժմ զուսպ է: Ռազմավիրական ճանապարհը բռնված է Սովետի զորքեր: Կարևոր է համարվում Վլադիկավկազում հրավիրել բոլոր գործիչների համագումար՝ մեզ հետագա քաղաքական գիծը մշակելու համար:*

Ս. Հարությունյան. *Մեր քաղաքականությունն ուղղված է դեպի գերմանական օրիենտացիան և հաշտարար վերաբերմունքը դեպի թուրքերը, չպետք է նման հեռագիրներ ընդունել, որպեսզի մեր ընդունած գիծը չխանգարվի:*

Տ. Բեկզադյան. *Անհրաժեշտ է մշակել ինստրուկցիաներ մեր հյուսիսային կոմիտեների համար, թեկուզ ինֆորմացիոն բնույթով:*

Ս. Մամիկոնյան. *Քանի որ մեր քաղաքականությունը պարտվում է, և դեռ դրական հետևանքներ չենք ստացել, չպետք է խանգարել մեր այն տարրերին, որոնք այլ, թերևս ճշմարիտ ճանապարհով, ուզում են մեզ օգնության հասնել:*

Ս. Հարությունյան. *Մեր քաղաքականությունը վարող մենք պիտի լինենք և ոչ դրսի մարդիկ, ինչպես լինում էր մեզանում տաճկահայերի նկատմամբ: Դա եղավ աղետա-*

բեր նրանց նկատմամբ, չպետք է կրկնել նույնը այստեղ: Երկու գիծ միմյանց չեզոքացնող չպիտի ունենալ և այդ մասին հրահանգներ տալ:

Մ. Հարությունյան. *Բոլոր քաղաքականություններն էլ խելոք են, նայած տեղին ու ժամանակին, ուստի չի կարելի արգելել մեր Ռուսաստանի հայրենակիցներին իրենց գիծն ունենալու, միայն իրազեկ դարձնել նրանց մեր դրությանը:*

Մ. Արզումանյան. *Տարօրինակ է, որ բոլոր հոսանքներն էլ միատեսակ գիծ են անցկացնում: Եթե կան տարրեր, որոնք ունեն տարբեր ուղղություն, օրինակ Հայ Ժողովրդական կուսակցությունը, թող պարզ արտահայտեն: Եթե Ազգային Խորհուրդը մի գիծ ունի, պետք է բոլոր իրեն ենթակա մարմինները նույն գիծն ունենան կամ լուծվեն և համապատասխան կարգադրություն անեն:*

Գեն. Մ. Արեշյան. *Հայտնել, որ մենք ստիպված ենք մի գիծ ունենալու, իսկ մյուս մասերը ազատ են սեփական ուղղություն ունենալու:*

Ն. Աղբալյան. *Ինչպես առաջ ասել եմ, այսօր էլ կրկնում եմ, որ այսուհետև մի ընդհանուր ազգային գիծ ունենալ չի կարելի, ուստի որևէ հրահանգ չտալ դրսի մարմիններին: Ամեն մի երկրի թողնել իրեն քաղաքականություն ունենալու և չխառնվելու մյուս հատվածների ներքին գործերին:*

Որոշումն. *Հայտնել դուրսը գտնված հատվածներին մեր դրությունը ստեղծված ներկա ծանր պայմաններից և հրահանգել վարելու այնպիսի քաղաքականություն, որ մեր գործերին ու տեղական հայերի շահերին չվնասի: Իսկ իրենց քաղաքական գիծը հարմարեցնել այդ երկրի կառավարչական քայլերին, իբրև այդ երկրի քաղաքացիներ և ոչ հայեր:*

Ս. Հարությունյան. *Մտցնում է իր առանձին կարծիքը. Անդրկովկասյան հայության վիճակի տնօրինողը, նրա քաղաքականություն վարողը պետք է համարվի ինքը՝ Անդրկովկասյան Հայությունը, ի դեմս Հայոց Ազգային Խորհրդի, հետևապես Անդրկովկասից դուրս գտնված հայությունը պետք է ենթարկվի այդ քաղաքականության կամ պահպանի նեյտրալիտետ քաղաքական խնդիրներում:*

Ս. Մամիկոնյան. *Նույնպես իր առանձին կարծիքն է մտցնում. արգելել Հյուս[իսային] Կովկասի և Ռուսաստանի հայերին տանել այն առողջ գիծը համերաշխության Ռուսաստանի հետ, նշանակում է ավելի ևս չեզոքացնել մեր ուժերը և փակել օգնության գուցե այն միակ դուռը, որ մոտակա ապագայում մեզ փրկություն կարող է բերել:*

Ռ. Տեր-Մինասյան. *Անհրաժեշտ է հայտարարել, որ այսուհետև որևէ անհատ կամ խմբակ պատասխանատու քայլ ու հայտարարություն չանի հայկական գավառների նկատմամբ:*

Այս առաջարկը ևս ընդունվում է, և որոշվում է այս ամենը մարդու միջոցով հայտնել մեր մարմիններին:

III. Լիազորների դերն ու իրավունքները հանդեպ մինիստրների:

Վրաց մինիստր նախագահի հետ խոսել են մեր իրավունքների մասին: Նա ասել է, որ Թիֆլիսում գտնվող հիմնարկությունները պետք է ենթարկվեն վրաց մինիստրության, իսկ մերոնք կարող են միայն հայտնել իրենց կարծիքը ու եզրակացությունը ոչ թե հանդես գալ իբրև հավասարազոր պաշտոնյաներ: Օրինակ պետական դիրեկտորի ընտրությունը, նրա կարծիքով վերապահվելու է վրաց մինիստրության:

Ա. Սահակյան. *Քանի որ ծախսերը մեր ընդհանուրի հաշվին են, պետք է հավասար լիազորություններով օգտվել: Ես այսօր մերժեցի նրանց միջամտությունը մեր գործերին: Պետք է դիմել վրաց կառավարության և պարզել այդ խնդիրը:*

Որոշումն. *Որոշվում է. ի նկատի ունենալով, որ Ն. Ժորդանիային ենթարկվում են*

բոլոր վարիչները, տես[ն]ել նրան և պարզել դրությունը իր բոլոր կտրուկությամբ:

Կարևոր է համարվում տեսակցել նաև թուրքերի հետ այդ խնդրի նկատմամբ:

Ընտրվում են՝ Ս. Մամիկոնյան, Ա. Սահակյան, Գ. Տեր-Հարությունյան և Գ. Խատիսյան, իսկ թուրքերի հետ խոսելու համար՝ Ս. Հարությունյան:

IV. Կառավարության կազմի խնդիրը:

Կառավարության կազմը որոշելը դեռ վաղաժամ է, պետք է սպասել Բաթումի բանակցությունների արդյունքին և հետևանքին: Իր խոր համոզումով մեր ուլտիմատումին հետևելու է երկրորդը:

Ա. Ահարոնյանը *երկու ելք էր հնարավոր համարում, բայց կա և երրորդը՝ այն է, որ մենք անկախություն չենք ուզում: …Մենք ժամանակավորապես վերցնում ենք կառավարչական ֆունկցիաներ, իսկ Ազգային Խորհուրդը ընտրված լինելով բոլոր հայերի կողմից՝ չի կարող մի որևէ մասի կառավարություն կազմել: Պետք է այդ իրավունքը փոխանցել Երևանի Ազգային Խորհրդին, որ և իրավազոր է կառավարություն կազմելու, եթե թուրքերի առաջխաղացումը դադարի: …*

Մ. Հարությունյան. *Եթե նույնիսկ մեր իրավունքները փոխանցվեն Երևանին, դարձյալ կառավարության խնդիրը չի լուծվի, ինքը համաձայն չէ դրան, կողմնակից է, որ Ազգային Խորհուրդը տեղափոխվի Երևան: Ն. Աղբալյանի տեսակետը անթույլատրելի է և գլուխ պրծեցնել կնշանակի: Պետք է այս դժվարին օրերում Ազգային Խորհուրդը գնա ժողովրդի մեջ աշխատելու իր մեծամասնությամբ:*

Արդյոք Հայ ժողովրդական կուսակցությունը կարո՞ղ է իր վրա վերցնել կառավարություն կազմելու դեկը: Չի կարող, որովհետև չունի ոչ բավական մեծություն և հմայք, իսկ քաղաքականության գծի սխալը ընկնում է նաև նրա վրա, որովհետև նրա վարիչները նույնպես մեղավոր են կամավորական շարժման մեջ: Միայն Հ. Հ. Դաշնակցությունը կարող է վերցնել այդ ծանր բեռը, թե ժողովրդի և թե օսմանյան կառավարության վստա-հությունը վայելելով: Կառավարությունն, իհարկե, ոչ ամբողջապես, այլ նախագահությունն ու մի քանի բաժիններ, այլ մյուս կուսակցություններից էլ ըստ արժանավորության անհատի: Իբրև հարմար թեկնածու իր մի քանի ընկերների կողմից մատնանշում է Ա. Խատիսյանին, որ թե ընդունակություններով և թե վարած գծով, համապատասխանում է ներկա դրության:

Ա. Սահակյան. *Ներկա ծանր դրությունը հետևանք է մի շարք ծանր պատճառների: Մեղավոր են բոլոր կուսակցությունները՝ Ազգային Խորհուրդը և մեր ինտելիգենցիայի մերկանտել գիծը, որ չկարողացան այս պատմական մոմենտում մեր դրությունը, էրզրումը, Կարսը պահել: Եթե որևէ կուսակցություն կարողանա ժողովրդին հանել այս ծանր դրությունից, ինքը կթողնի դաշնակցությունը, որին ծառայել է 30 տարի հոգով և սրտով: Բայց, դժբախտաբար, այդպիսին մեր մեջ չկա և դարձյալ բեռը ընկնելու է դաշնակցության վրա և այն էլ այնպիսի մարդկանց, որոնք վայելում են ժողովրդի վստահությունը, իհարկե, բոլոր կուսակցություններից:*

Ա. Խոնդկարյան. *Անհրաժեշտ է ունենալ մի ընդհանուր օրգան, որովհետև դեռ կան ընդհանուր հարցեր: Որտե՞ղ է լինելու նրա տեղը, որը ցույց կտան մոտակա դեպքերը: Անունը պետք է մնա Ազգային Խորհուրդ, որպեսզի դրսի հարաբերությունների մեջ չերևա, թե մենք անջատված ենք, առանց հաշվի առնելու նրա ներքին կազմը: Դա շատ կարևոր է այն տեսակետից, որ չի հավատում այս դրության տևականությանը և ուրեմն հնարավոր կլինի գուցե վերահաստատել մեր կապը Ռուսաստանի հետ: Ներքին կազմը պետք է շարունակել կոալիցիոն ձևով և ոչ թե հանձնել Հայ Ժողովրդական կուսակցության, որ որոշակի չի հակադրել դաշնակցության: Այլ բան են սոցիալիստական կու-*

սակցությունները, որոնք միշտ հակադրել են դաշնակցության: Բայց մեր թշնամիները մեզ նայում են ոչ որպես կուսակցություններ, այլ ազգ, ուստի և պետք է կոալիցիոն սկզբունքով կազմվի, մնացածը տեխնիկական հարց է: Պետք է կուսակցությունների ներկայացուցիչները փոխադարձ համաձայնությամբ մատնանշեն մի մարդ, որ նա կառավարություն կազմի:

Մ. Արզումանյան. *Ապագա խորհուրդը ավելի լայն է լինելու, որ և ընտրելու է կառավարությունը: Եթե զինաթափ ենք լինելու, կառավարությունը հանձնել Հայ Ժողովրդական կուսակցության, իսկ եթե չէ՝ դաշնակցության, որին հաշվի են առնում այլ ազգեր: Բայց այդ կառավարության մեջ մտցնել նաև փոքրամասնությունից: Կառավարություն կազմելը հանձնել մեկին, որ որոշ նորմայով կազմի և տեղափոխվի Երևան խորհրդի հետ միասին:*

Հ. Առաքելյան. *Հայ Ժողովրդական կուսակցությունը կամավորական շարժման մեջ դեր չի խաղացել: …Անկախություն չհայտարարել, բայց կազմել ժամանակավոր կառավարություն՝ պահպանելով խորհրդի անունը և փոխելով նրա կազմը այնպես, որ դաշնակցությունը ղեկավարող դեր չկատարի: Նրա երեսնամյա գործունեությունը բացասական հետևանքներ տվեց, և նրա ղեկավարող դերը կարող է խանգարել մեր բարեկամական հարաբերություններին ոչ միայն հարևանների, այլև դրսի պետությունների հետ: Ազգային Խորհրդի կազմը լրացնել նոր անդամներից, թեկուզ և չեզոք անհատներից, որոնք կառավարություն կազմելը կհանձնեն մի ոչ դաշնակցականի, որ կոալիցիոն սկզբունքով նոր կառավարություն կազմի, տեղափոխվելով այնտեղ, որտեղ մեր ժողովուրդն է:*

Գեն. Մ. Արեշյան. *Ռազմական տեսակետից անհրաժեշտ է, որ զինվորական մինիստրը լինի անկուսակցական և մասնագետ զինվորական: …*

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 239 – 241 դարձ.:

№ 6

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, հունիսի 1, 1918 թ., 21:00–22:30, նիստ ՃԺԹ (119)

Նախագահում էր՝ Ա. Ահարոնյան, ներկա էին՝ Տ. Բեկզադյան, Ս. Մամիկոնյան, Ռ. Տեր-Մինասյան, Ս. Հարությունյան, Խ. Կարճիկյան, Ա. Բաբայյան, Ա. Ստամբոլցյան:

…II. Անկախության հարցը:

Քանի որ այս երկու օրս Բաթումի պատվիրակությունը գալու է, որոշվում է սպասել նրանց և ապա խոսել այդ մասին: Իսկ մինչև այդ որոշվում է կազմել մի մասնաժողով անկախության ակտը մշակելու, բազմակողմանիորեն հայտարարման ձևն ու տեղը որոշելու: Մասնաժողովի անդամ ընտրվում են Ս. Մամիկոնյան, Ս. Տիգրանյան, Ս. Հարությունյան՝ Ս. Տիգրանյանին համարելով մասնաժողովի նախագահ:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 242–242 դարձ.: